ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 534-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԽՆԱՄՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի անչափահաս երեխա ունեցող կամ խնամող բնակիչների՝ 28.12.2022թ. Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները՝

ո ր ո շ ում ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի՝ Սյունիքի մարզպետին դիմած բնակիչներին «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 758 000 (յոթ հարյուր հիսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 758 000 (յոթ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ գումարի վճարումը հավելվածում նշված քաղաքացիներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂԱՖԱՐՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Կապան